

# Նեոազատական գաղափարախոսության զարգացման միտումները հայաստանյան արդի հասարակական-քաղաքական գործընթացներում

Ռուխկյան Լ. Մ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան (Հայաստան, Երևան),  
levonrukhkyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ նեոազատականություն, գլոբալիզացիա, ազգային արժեքներ, քաղաքակրթությունների երկխոսություն, ինքնություն

## Тенденции развития неолиберальной идеологии в современных армянских общественно-политических процессах

Рухкян Л. М.

Российско-Армянский (Славянский) университет (Армения, Ереван)  
levonrukhkyan@gmail.com

**Резюме:** Таким образом, в результате трансформации политического режима в СССР в 1990-х годах принципы отношений индивидуум-общество-государство были основаны на принципах демократии. Тем не менее, исследования показали, что армянское общество еще не приняло основные положения управления на основе участия. В современных условиях глобализации армянское общество должно демонстрировать разумность и воспринимать как положительные, так и отрицательные воздействия как результат или следствие и взять только положительное, принимая современные условия для гражданского участия и отвергая ценности, которые подрывают основы нации.

**Ключевые слова:** Неолиберализм, глобализация, национальные ценности, диалог цивилизаций, идентичность.

## Neo-liberal ideological tendencies of development in modern Armenian social and political processes

Rukhkyan L.M.

Russian-Armenian (Slavonic) University (Armenia, Yerevan)  
levonrukhkyan@gmail.com

**Abstract:** Thus, as a result of the transformation of political regime in USSR in 1990s, individual-society-state relations were based on the principles of democracy. However, studies have shown that the Armenian society has not yet adopted the main provisions of participatory governance. In the current conditions of globalization, the Armenian society must demonstrate rationality and perceive both positive and negative impacts as a result or a consequence and take only positive, accepting modern conditions for civic participation and rejecting the values that undermine the foundations of the nation.

**Keywords:** Neo-liberalism, Globalization, National Values, Dialogue of Civilizations, Identity.

Հայաստանի արդի քաղաքական մշակույթի զարգացման հիմնախնդիրները ավելի հանգամանալից և մանրակրկիտ վերլուծելու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադարձ կատարել մի քանի հարցադրումների: Դրանք են՝ ի՞նչպես է ձևավորվել Հայաստանի արդի քաղաքական մշակույթը, ինչպիսի՞ դրսևորումներ և բաղադրատարրեր է ունեցել Հայաստանի քաղաքական մշակույթը և ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել, արդի ժամանակաշրջանում ինչպիսի՞ քաղաքական մշակույթ է բնորոշ Հայաստանին, արդյո՞ք Հայաստանում

զարգացել է մասնակցային քաղաքական մշակույթը թե՞ դեռևս հպատակային քաղաքական մշակույթի կրողն էնք, ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել Արևելյան և Արևմտյան քաղաքակրթությունները Հայաստանի քաղաքական մշակույթի վրա, ի՞նչ դեր ունի գլոբալիզացիան Հայաստանի արդի քաղաքական մշակույթի զարգացման և դրսևորումների վրա, արդյո՞ք Հայաստանը զարգանում է լիբերալ-ժողովրդավարական և սոցիալ-դեմոկրատական ուղիով:

Անդրադառնալով դրանցից առաջինին նշենք, որ Հայաստանի արդի քաղաքական

մշակույթը սկսեց ձևավորվել XX դարի 90-ականներին: Այն կապված է ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների հետ, որոնք հիմք դրեցին հասարակության, պետության և անհատների միջև նոր հարաբերությունների, ժողովրդավարական սկզբունքների արմատավորման: Այս փոփոխությունները ձևավորեցին նոր մտածելակերպ, նոր քաղաքական գիտակցություն և նոր քաղաքական մշակույթ: 1988թ. սկսած Ղարաբաղյան շարժումը լուրջ քաղաքական խնդիրներ դրեց հասարակության առջև, որոնց լուծումները պահանջում էին անհրաժեշտ քաղաքական մշակույթի առկայություն: 1990թ. Հայաստանում տեղի ունեցան ԳԽ ընտրություններ, որոնք ընդունվեցին որպես նոր քաղաքական գիտակցության և քաղաքական մշակույթի դրսևորումներ: Հայաստանի համար փաստորեն սկսվում էր պատմության զարգացման նոր ժամանակաշրջան, քաղաքական զարգացման նոր փուլ: Հայաստանը դարձավ քաղաքական գործընթացների գործուն մասնակից, սկսեց ազդել իրացվող գործընթացների և քաղաքական որոշումների կայացման վրա: Սրանք նոր քաղաքական մշակույթի առարկայական դրսևորումներն էին: Հետագա տարիներին ձևավորվեցին քաղաքական մշակույթի ինստիտուտային բաղադրատարրերը՝ քաղաքական համակարգը, քաղաքական կուսակցությունները, քաղաքական ռեժիմը, ինչպես նաև՝ ժողովրդավարական այլ արժեքներ: Իհարկե քաղաքական մշակույթի այս բաղադրատարրերը հասարակության մեջ դեռևս ամրապնդված չէին, որովհետև դրանք գտնվում էին իրենց ձևավորման և զարգացման գործընթացում: Հայաստանում տեղի ունեցող հետագա իրադարձությունները (պատերազմական գործողությունների դադարեցում, Մահմանադրության ընդունում, խորհրդարանական և նախագահական ընտրություններ և այլն) վեր հանեցին, նախ, նոր քաղաքական մշակույթի անհրաժեշտությունը հասարակական կյանքի, քաղաքական հարաբերությունների գործընթացներում և, երկրորդ, բացահայտեցին նրա զարգացման և դրսևորման առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքական կյանքի և քաղաքական մշակույթի միավորման դրական միտումները 90-ական թթ. կեսերին սկսեցին որոշակի ձևափոխման ենթարկվել: Արտա-

հայտվեցին քաղաքական համակարգի այնպիսի բնորոշ գծեր, որոնք հատուկ էին ավտորիտար-քաղաքական համակարգին: Այսինքն ձևավորվում են կեղծ ժողովրդավարական սկզբունքներ, ենթակայական տիպի քաղաքական մշակույթ, քաղաքական ինստիտուտների հեղինակազրկում և այլն<sup>1</sup>: Այսպիսով կարող ենք ասել, նոր քաղաքական մշակույթի ձևավորումը և զարգացումը տեղի էր ունենում հակասական վայրվերումներով: Օրինակ՝ ԱԺ ընտրություններին զուգահեռ 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվե ընդունեց ՀՀ սահմանադրությունը, որը իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, սահմանեց քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Մահմանադրության ընդունումը կարևոր քայլ էր նոր դեմոկրատական քաղաքական մշակույթի կայացման գործում: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ չնայած սահմանադրությամբ ամրագրված էր իշխանությունների տարանջատման սկզբունքը, նախագահին տրվեց բավականին լայն լիազորություններ: Ինչն էլ պատճառ հանդիսացավ քաղաքական համակարգի հետընթաց զարգացման համար: Այսինքն՝ մի կողմից ստեղծվում էին դեմոկրատական քաղաքական մշակույթի զարգացման համար բոլոր նախադրյալները մյուս կողմից էլ դրան հակասող դրույթներ:

Ալմոնդը և Վերբան առաջ քաշեցին մի հասկացություն, որը անվանեցին քաղաքացիական մշակույթ: Նրանք քաղաքացիական մշակույթը սահմանեցին որպես այնպիսի բաղադրյալ քաղաքական մշակույթ, որտեղ գերակշռում է մասնակցային քաղաքական մշակույթը: Քաղաքացիական մշակույթը կրող անձը ոչ թե անընդհատ ակտիվ, այլ պոտենցիալ ակտիվ քաղաքացի է<sup>2</sup>: Վերոգրյալից հարց է առաջանում, թե որքանո՞վ է Ալմոնդի և Վերբայի առաջադրած տիպաբանությունը կապված Հայաստանի արդի քաղաքական

<sup>1</sup> Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006թ., էջ 462-463:

<sup>2</sup> Մանուկյան Մամվել, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական մշակույթի զարգացման սոցիոլոգիական կանխատեսման մոդելը և գործոնները, էջ 16-17:

մշակույթի հետ: Պետք է նշենք, որ անմիջակա- նորեն, քանի որ նրանց առաջարկած տիպա- քանությունը համապատասխանում է Հայաս- տանում տիրող արդի քաղաքական մշակույ- թին: Սակայն այստեղ ևս մեկ այլ հարց է ծա- գում, թե ո՞ր տիպին է պատկանում Հայաստա- նի քաղաքական մշակույթը: Այս հարցադրու- մին պատասխանելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կյանքի որակի 2012թ. հետազոտությունում ուսումնասիրված Հա- յաստանի բնակչության քաղաքական մշակույ- թի մի շարք բաղադրիչներին: Դրանցում պա- րունակվող հիմնական դրույթներն են.

- Հայաստանի հասարակությունը բնու- թագրվում է միջին քաղաքական հետա- քրքրվածությամբ (42.8%) և միջին քաղաքա- կան կոմպետենտությամբ (50.6%):

- Քաղաքական սուբյեկտության զգա- ցողությունը ցածր է (27.9%):

- Նախընտրական հանդիպումների մաս- նակցությունը ցածր է (24.4%):

- Սակայն ընտրական մասնակցությունը բարձր է (միշտ մասնակցում են 72.4%): 2012թ. ԱԺ ընտրություններին մասնակցել է 77.1%-ը:

- Ընտրազանգվածի կայունությունը ցածր է՝ ընտրություն է կատարում կախված տարբեր հանգամանքներից 68.4%-ը:

- 2012թ. մայիսի 6-ի ընտրություններին կուսակցություններին տրված ձայները՝ հաշ- վարկված կյանքի որակի 2012թ. Հետազոտությ- յամբ և ԿՀՀ պաշտոնական տվյալներով, բա- վականին համընկնում են՝ բացառությամբ ՀՀԿ-ին տրված ձայների: Կյանքի որակի հե- տազոտությամբ ՀՀԿ տրված ձայները կազմել են 50.3%, իսկ ԿՀՀ պաշտոնական տվյալնե- րով՝ 44.1%: Այս անհամապատասխանությու- նը բացատրվում է սոցիոլոգիական այն ֆե- նոմենով, որ մարդկանց մի մասը հակված է ինքնանույնականացվելու հաղթողի հետ, որի հետևանքով երբեմն «շփոթում է», թե ում է ձայն տվել:

- Հասարակության 3/4-ը ընդունելի չի համարում քաղաքական ընտրություններում «ձայն փողի դիմաց» երևույթը:

- Հայաստանի հասարակությունը կու- սակցականացված է. եթե 1985թ. ԽՍՀՄ-ում ԽՄԿԿ անդամն էր չափահաս բնակչության 10%-ը, ապա 2012թ. Հայաստանում՝ 15.9%-ը:

- Բոլոր կուսակցականների մոտ կեսը՝ (49.2%) Հայաստանի Հանրապետական Կու-

սակցության անդամ է, իսկ 35.8%-ը՝ Բարգա- վաճ Հայաստան Կուսակցության անդամ, ինչը համապատասխանաբար կազմում է ՀՀ չափա- հաս բնակչության 7.6% և 5.5%-ը:

- Սյուս կողմից, շատ ցածր է քաղաքա- ցիական մասնակցությունը, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների ան- դամ է չափահաս բնակչության 2.9%-ը:

- Դեռևս ցածր է հասարակության կողմից հասարակական կազմակերպությունների քա- ղաքացիական սուբյեկտության գնահատա- կանը (38.7%), որը, սակայն, արդեն մոտ է «միջին» մակարդակի շեմին (40%):

- Չափահաս բնակչության միայն 20.7%-ն է որևէ կերպ մասնակցում համայնքի կամ թաղամասի խնդիրների լուծմանը:

- Մասնակցության հիմնական ձևերն են՝ թաղապետարանի/քաղաքապետարանի կամ համայնքապետարանի առջև հարց բարձ- րացնելը (10.9%) և որևէ հարցի լուծման ինք- նուրույն կազմակերպումը (9.5%):

- Տեղական ինքնակառավարման մար- մինների գործունեությունից «Լիովին բավա- րարված է» կամ «Ավելի շուտ բավարարված է» բնակչության 56.9%-ը: Ընդ որում՝ բավա- րարվածությունը նշանակալիորեն ավելի բար- ձր է գյուղական համայնքներում (70.2%), քան մարզային քաղաքներում (51.2%) և Երևանում (48.3%):

Հիմնվելով քաղաքական մշակույթի բաղադրիչներից ստացված արժեքներին՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի հասարակությունը մնում է որպես առավելապես հպատակային քաղաքական մշակույթ ունեցող հասարակություն<sup>3</sup>: Այսինքն՝ սույն հետազոտությունը փաստում է, որ Հայաստանում արմատավորված է հպատակային քաղաքական մշակույթը և հայ հասարակությունը դեռևս հեռու է մասնակցային քաղաքական մշակույթ ունե- նալուց:

Կարող ենք ասել, որ մենք՝ հայերս, մեծա- մասամբ լինելով հպատակային տիպի քաղա- քական մշակույթի կրող, մինչ օրս չենք կարո- ղացել ձևավորել հասարակակենտրոն քաղա- քական մշակույթ՝ մնալով անհատակենտրո-

<sup>3</sup> Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, «ԱյՓիԷսՍի» Քաղա- քական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 30 մարտի, 2013թ., էջ124-125:

նության տիրույթում: Վերջինս վաղ ժամանակներից իր ուրույն տեղն է գտել արևելյան հանրություններում: Անդրադառնալով ՀՀ-ում ներկայումս տիրող իրավիճակին պետք է նշենք, որ այսօր անհատակենտրոնությունը, ավանդույթի ուժով պահպանվելով հայ քաղաքական մշակույթի սահմաններում, որոշակիորեն դրսևորվում է նաև հասարակական հարաբերություններում և հանդես գալիս որպես ազգային բնավորության գիծ: Հայ քաղաքական մշակույթում անհատակենտրոնությունը նկատելի է դառնում հատկապես քաղաքական էլիտայի շրջանակներում, երբ քաղաքական միավորները ձևավորվում և գործունեություն են ծավալում անհատների նախաձեռնությամբ ու գլխավորությամբ: Այդպիսով, ստեղծվում է մի իրավիճակ, երբ գաղափարական պայքարը իր տեղը գիջում է անձնական և կուսակցական շահերի բախման արդյունքում ի հայտ եկած պայքարին: Այս գործընթացը ընթանում է և՛ իշխանության, և՛ ընդդիմության շրջանակներում, ուստի իշխանություն-ընդդիմություն ծայրահեղ բևեռները համահավասարվում են՝ որպես անհատակենտրոնության դրսևորման տիրույթներ: Հետևաբար, և՛ իշխանությունը, և՛ ընդդիմությունը դուրս են մնում փոխլրացման գործընթացից՝ հայտնվելով ոչ թե համագործակցային, այլ անառողջ մրցակցային հարթությունում: Ուշադրություն հրավիրենք այն հանգամանքի վրա, որ ընդդիմադիր և իշխանական օղակները ներկայացնող քաղաքական էլիտայի ներկայացուցիչները համակարծիք չեն ՀՀ կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների ընտրության շուրջ:

Դեռ ավելին, երկար տարիներ հասարակական գործընթացներն այնպես են ընթացել, որ հասարակությունն, իր հերթին, խորապես չէր գիտակցում ՀՀ իշխանությունների կողմից որդեգրված բարեփոխումների կուրսը, ինչպես նաև սահմանադրական բարեփոխումների կարևորությունը, որը միտված էր մասնակցային քաղաքական մշակույթի ձևավորմանը: Կարևոր է արձանագրել նաև այն, որ տարբեր բնագավառներում իրագործվող ուղղափոխումները Հայաստանի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրի հիմքերն են, որոնց սոցիալ-տնտեսական արդյունքը նկատելի կլինի մոտ ապագայում: Այդպիսով՝ հանուն Հայաստանի ապագայի ու համընդհա-

նուր օգուտի անհրաժեշտ է, որ հայաստանյան քաղաքական էլիտայի ներկայացուցիչները ձերբազատվեն անհատի պաշտամունքից՝ անձնական շահը ստորադասելով հասարակական շահին և համագործակեն միմյանց հետ ՀՀ կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծման շուրջ: Արդյունքում, հայ քաղաքական մշակույթը կենթարկվի որակական փոփոխության և անհատակենտրոն մշակույթի կրող քաղաքական էլիտային կփոխարինի հասարակակենտրոն մշակույթի կրող քաղաքական էլիտան: Այս պարագայում որոշում կկայացնեն ոչ թե անհատները, այլ անհատների համախումբը, որն էլ, իր հերթին, կդառնա Հայաստանի զարգացման կարևոր գրավականներից մեկը<sup>4</sup>: Համաձայնելով սույն կարծիքի հետ պետք է նշենք, որ Հայաստանում իսկապես առկա է անհատակենտրոն այլ ոչ թե հասարակակենտրոն քաղաքական մշակույթ և դրա շտկման համար անհրաժեշտ է փոփոխության ենթարկել ազգային մտածելակերպի որոշակի տարրեր և անհրաժեշտ է, որպեսզի քաղաքական գործիչները հասարակական շահը գերադասեն իրենց շահից:

Միջազգային տնտեսական, քաղաքական կազմակերպությունների և վերազգային կորպորացիաների գործունեության արդյունքների նկատմամբ հատկապես զգայուն են տնտեսապես թույլ երկրները, ինչպիսին է նաև Հայաստանը: Այդ կազմակերպությունների ուղղակի և անուղղակի միջնորդությամբ Հայաստանում արմատավորվում են արևմտյան քաղաքակրթության արժեքներ, մասնավորապես արևմտյան քաղաքական մշակույթի տարրեր<sup>5</sup>: Այս ենթանդրության վառ ապացույցն է Հայաստանում ներդրված տոլեռանդության գաղափարը ցանկացած տիպի փոքրամասնության հանդեպ: Կարող ենք ասել, որ տնտեսական և քաղաքական կյանքի գլոբալիզացիան հանգեցրել է հասարակական կյանքի մյուս բոլոր ոլորտների գլոբալիզացիային: Այն ընդգրկել է նաև մարդկանց ապրելակերպը,

<sup>4</sup> Վահրամ Մկրտչյան, ԱԺ պատգամավոր, Նոր քաղաքական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը. Անհատակենտրոնությունից հասարակակենտրոնություն հոդված: <http://www.barepasht.am/am/hrapayaralkyումներ/hոդվածներ/item/457>

<sup>5</sup> Ստեփանյան Վ., Հայաստանը գլոբալ աշխարհում, Կանթեղ 5, Երևան 2001թ., էջ 158-159:

կենսառճր, կենցաղը, ժամանցը, արվեստը և ողջ հոգևոր կյանքը:

Այսինքն՝ վերոգրյալից կարող ենք հետևել, որ գլոբալիզացիան մեծ ազդեցություն գործելով Հայաստանի վրա նպաստում է վերջինիս ներգրավվածանը մի շարք միջազգային կազմակերպությունների, ինչն էլ իր հետքն է թողնում երկրի քաղաքական մշակույթի, տնտեսության և մի շարք այլ ոլորտների վրա: Ըստ մեզ գլոբալիզացիան երկրի վրա ունենում է թե՛ դրական թե՛ բացասական ազդեցություն: Դրական առումով կարող ենք առանձնացնել գլոբալիզացիայի ունեցած դրական ազդեցությունը տնտեսության և քաղաքական մշակույթի վրա: Տնտեսական առումով Հայաստանը ներգրավվելով միջազգային տնտեսական կազմակերպությունների մեջ, ձեռք է բերում իր տնտեսությունը զարգացնելու մի շարք ուղիներ և հնարավորություններ: Քաղաքական մշակույթի տեսանկյունից ինչպես արդեն նշեցինք գլոբալիզացիան նպաստում է այնպիսի Արևմտյան արժեքների ընդօրինակմանը, ինչպիսիք են տոլեռանդությունը և այլ ժողովրդական արժեքները (անձի հավասարության, ազատության...), վերջիններս մեծ նշանակություն ունեն պետության՝ հասարակության շահերից բխող կառավարում իրականացնելու, քաղաքացիական գիտակցության բարձրացման համար, որը կնպաստի ավելի քաղաքականապես հասուն հասարակություն ստեղծելուն, ինչն էլ հանդիսանում է կայուն պետական ապարատի ստեղծման ուղիներից մեկը:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ գլոբալիզացիան երկրների վրա ազդում է ինչպես դրականորեն այնպես էլ բացասականորեն: Նրա վերոգրյալ բացասական ազդեցությունը ներգործում է նաև Հայաստանի վրա: Ներկայումս Հայաստան են ներգործել այնպիսի մշակութային տարրեր, որոնք նախկինում խորթ են եղել հայ ազգի ինքնությանը և ներկայում աստիճանաբար պատճառ են հանդիսանում հայ ազգին բնորոշ ավանդական մշակույթի օտարացմանը:

Այսպիսով, մեր ազգի առաջ ծառայել է ոչ միայն քաղաքակրթությունների բախման ժամանակ սեփական տեղը գտնելու հիմնահարցը, այլև համատարած գլոբալիզացիայի/ վեստերնիզացիայի պայմաններում սեփական ինքնությունը պահպանելու խնդիրը, քանի որ, լինելով քրիստոնյա և արևմտյան արժեքների

կրող, հայերը կանգնում են ձուլման վտանգի առջև:

Հաշվի առնելով վերոնշյալը մենք առաջարկում ենք ուսումնասիրել այլ երկրների փորձը, որոնք հաղթահարել են ձուլման վտանգը, կիրառելով միմիկրիան: Միմիկրիայի էությունն այն է, որ տեղային քաղաքակրթությունը վերցնում է հզոր քաղաքակրթության տարրերի արտաքին ձևը նրան հաղորդելով իր ներքին բովանդակությունը: Միմիկրիայի հաջող կիրառման օրինակ է համարվում Ճապոնիայի փորձը: Իսկապես, Ճապոնիայում քաղաքական մակրոկառուցվածքը՝ պառլամենտական ժողովրդավարության, սահմանադրականության, իրավական պետության և դասական ժողովրդավարության այլ դրսևորումների ձևով, ստեղծված է իմբային, կոլեկտիվիստական սկզբունքների պահպանման պայմաններում: Փաստորեն, Ճապոնիան, փոխառելով արևմտյան քաղաքակրթության որոշ ինստիտուտներ, քաղաքական կյանքը կազմակերպելով արևմտյան մշակույթի չափանիշներով, միննույն ժամանակ պահպանում և ամրապնդում է ազգային մշակույթը այլ ոլորտներում՝ գիտության, տնտեսության մեջ, արվեստում<sup>6</sup>: Կարծում ենք, որ Ճապոնական փորձը արժանի է ընդօրինակման, բայց ոչ կրկնօրինակման: Ճապոնացիներից պետք է սովորել արևմտյան արժեքների հանդեպ ընտրողական վերաբերմունք ցուցաբերելը, դրանցից ընտրել մեր մենթալիտետին առավելապես համապատասխանները, իսկ հակասողները կամ միանգամից մերժել, կամ էլ ընդունել միայն ձևական: Այսինքն Ճապոնական փորձը կարող է շատ ուսուցանող լինել Հայաստանի համար անգամ արդի ժամանակաշրջանում: Այս տեսանկյունից Հայաստանը ևս կարող է Արևմտյան քաղաքակրթությունից փոխառել որոշակի արժեքներ, որոնք կնպաստեն երկրի քաղաքական մշակույթի զարգացմանը, ավելի արդյունավետ քաղաքական ինստիտուտների ձևավորմանը, սակայն անհրաժեշտ է, որպեսզի դրանք համապատասխանեն երկրի սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական, սոցիալ-մշակութային առանձնահատկություններին: Այսինքն Հայաստանը ևս պետք է ընտրողա-

<sup>6</sup> Ստեփանյան Վ., Հայաստանը գլոբալ աշխարհում, Կանթեղ 5, Երևան 2001թ., էջ 170:

կան վերաբերմունք ցուցաբերի թե՛ Արևմուտքի և թե՛ Արևելքի արժեքների հանդեպ:

Հասկանալու համար, թե ինչ է պետք վերցնել Արևմտյան արժեքներից, պետք է առանձնացնել, թե նեոազատական որ գաղափարներն ու իդեալները կարելի է գտնել մեր քաղաքական մշակույթում: Անկախության առաջին տարիներին մենք ընտրել էինք դեմոկրատիայի անզրո-սաքսոնական տարբերակը, որի գաղափարախոսն էր Ջ. Լոկը: Այս ուղղությունը ստացավ լիբերալ-ժողովրդավարություն անվանումը, որտեղ լավն է այն պետությունը, որը ոչ միայն երաշխավորում է մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այլև մաքսիմալ կերպով ընդլայնում է անհատի ազատությունների սահմանները<sup>7</sup>: Այն փաստը, որ լիբերալների երազած ազատությունը բաղձալի նպատակ է եղել նաև հայ ժողովրդի համար, կասկածներ չի կարող հարուցել: Մակայն հարկ է նշել, որ հայ ժողովրդի պայքարը քաղաքական ազատության համար էր, իսկ Արևմտյան լիբերալները ուզում էին տնտեսական ազատացում և պետության մինիմալ մասնակցությունը տնտեսական գործերին<sup>8</sup>: Տարբերակում չղնելով այս երկուսի միջև՝ 90-ականների սկզբին սկսվեց Հայաստանի տնտեսության լիբերալիզացիա: Այս գործընթացը աղետալի հետևանքներ ունեցավ մեր երկրի տնտեսության համար, քանի որ շուկայական տնտեսության փորձից զրկված երկրում սկսեցին չնչին գներով մասնավոր սեկտորին հանձնվել պետական գործարանները և այլ օբյեկտներ: Նման վիճակը չէր կարող չարժեզրկել լիբերալ գաղափարները ժողովրդի աչքերում: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ տնտեսվարման լիբերալ ուղին պետական մինիմալ միջամտությամբ անհաջողություն է կրել մեր երկրում: Այսինքն՝ Արևմուտքի առաջ քաշած լիբերալ-ժողովրդավարության գաղափարը՝ մասնավորապես պետության տնտեսության մինիմալ մասնակցության մասին, Հայաստանյան իրականության մեջ ձախողվեց:

Վերադառնալով նեոազատական արժեքներին՝ անդրադառնանք ազատության հետ

փոխկապակցած հանդես եկող մեկ այլ հասկացության՝ հավասարությանը: Այստեղ ևս բախվում ենք հավասարության երկու ընկալման. առաջին դեպքում՝ լիբերալ-դեմոկրատիայի պարագայում, պետությունը պարտավոր էր պահպանել հավասարությունը խիստ իրավական առումով, այսինքն հավասարություն օրենքի առջև, իսկ սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից (ֆրանսիական մոդել) պետությունը պետք է փորձի ապահովել իր քաղաքացիների կենսապայմանների գոնե հարաբերական հավասարությունը<sup>9</sup>: Ընտրելով տրնտեսվարման լիբերալ-դեմոկրատական ուղին՝ մեր պետությունը 90-ականների սկզբին հանձն չառավ ապահովել իր քաղաքացիների հարաբերականորեն հավասար տնտեսական հնարավորությունները, ինչը կրկին համարում ենք թերի հաշվարկ, քանի որ այդ հավասարությանը հնարավոր կլինեի հասնել պետական հիմնարկների ոչ լրիվ մասնավորեցմամբ: Այսպիսով՝ կարող ենք վերոգրյալից եզրակացնել, որ նեոազատական արժեքները համապատասխանում են մեր ազգի մենթալիտետին, սակայն պետք է կատարել ճիշտ ընտրություն դեմոկրատիայի ուղղությունների միջև: Այսինքն՝ ընտրողական մոտեցում ցուցաբերել, գտնել ազգային ինքնությանը, աշխարհայացքին առավել համապատասխան տարբերակը:

Եվ, ի վերջո, կարծում ենք, հետայսու հայ հասարակությունը պետք է տանել նեոազատական գաղափարախոսության ճանապարհով, որի հիմքում պետք է ընկած լինեն ազգային արժեքները և որը պետք է ամրագրվի պետության կողմից: Պետությունը պետք է հոգա այն մասին, որ Հայաստանը չկրկնի Ռուսաստանի Դաշնության ոչ այնքան հաջող փորձառությունը, երբ ՌԴ-ում հաստատված նեոազատական գաղափարախոսությունն ազատեց երկիրը նախորդ վարչակարգից, սակայն չնպաստեց նորի ստեղծմանը և կայացմանը: Ըստ այդմ ՀՀ նեոազատական գաղափարախոսությունը

- պետք է ներառի գլոբալիզացիայի միայն դրական կողմերը՝ բացառելով հայերիս ձուլումն Արևմտյան արժեքներին, ներառելով դրական ելքի հավանականություն ունեցող

<sup>7</sup> Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Изд-во Российско-Армянского университета, 2011, стр.184.

<sup>8</sup> Харви Дэвид. Краткая история неоллиберализма. М.: Поколение, 2007. стр.4.

<sup>9</sup> Малахов В.С. Государство в условиях глобализации. М.: КДУ, 2007. стр.15-19.

բոլոր տնտեսական համագործակցությունները,

- պետք է ապահովվի հասարակության անդամների հավասարությունը կենսագործունեության բոլոր ասպեկտներում՝ զուգահեռ բացառելով «հավասարության» սխալ ընկալումը և դրա հավանական բացասական ազդեցությունը կենսագործունեության ընդհանուր միջավայրի վրա,

- պետք է ապահովվի անհատի հարմարվողականությունը հասարակությանը և ներգրավվածությունը հասարակական կյանքին՝ բացառելով անձնական շահի գերակայումը հասարակական շահի նկատմամբ:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարող ենք ասել, որ Հայաստանյան արդի քաղաքական մշակույթը ներկայումս գտնվում է զարգացման և կատարելագործման փուլում: Այն ներկայումս ևս գտնվելով Արևելյան և Արևմտյան քաղաքակրթությունների խաչմերուկում փորձում է վարել երկու քաղաքակրթությունների երկխոսություն և նրանցից ընդօրինակել միայն այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում միմյանց և համապատասխանում են իր ժողովրդի ազգային խառնվածքին: Հետևաբար, Հայաստանի համար այսօրեական է քաղաքակրթական ձուլման բացառումը՝ ինքնօրինակության և ինքնության պահպանման միջոցով: Նշված հիմնախնդրի լուծումը ենթադրում է այլ քաղաքակրթությունների ներազդման ապահովումը դրական համատեքստում՝ բացասական ներազդումը նվազագույնի հասցնելու միջոցով, որպիսին կարող է լինել արևմտյան ժողովրդավարական արժեքների տեղայնացումը: Հարցի այսօրեական բնույթը պայմանավորված է ատենախոսության շրջանակում լայնածավալ ուսումնասիրությունների հիմքով կատարված այն եզրակացությամբ, որ քաղաքակրթական-մշակութային տարբերությունները ավելի մնայուն են, քան սոցիալ-քաղաքականները ու տնտեսականները: Վերը

բերված հիմնախնդրի լուծումը պահանջում է գտնել այն հիմնական ուղիները, որոնք կնպաստեն մշակութային խառնաշփոթության կանխմանը, քաղաքական նոր և ավելի հասարակակենտրոն մշակույթի ստեղծմանը, գլոբալիզացիայի պայմաններում ազգայինը (մշակույթ, արվեստ, ավանդույթներ և այլն) պահպանելուն և միևնույն ժամանակ վերազգային մակարդակում մյուս երկրներից հետ չմնալուն:

#### **Գրականության և աղբյուրների ցանկ**

1. Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006թ., էջ 462-463:
2. Մամվել Մանուկյան, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական մշակույթի զարգացման սոցիոլոգիական կանխատեսման մոդելը և գործոնները, էջ 16-17:
3. Ս. Մանուկյան, Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, «ԱյՓիէսՍի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 30 մարտի, 2013թ., էջ 124-125:
4. Վահրամ Մկրտչյան, ԱԺ պատգամավոր, Նոր քաղաքական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը. Անհատակենտրոնությունից հասարակակենտրոնություն հոդված: <http://www.barepasht.am/am/հրապարակումներ/հոդվածներ/item/457>
5. Ստեփանյան Վ., Հայաստանը գլոբալ աշխարհում, Կանթեղ 5, Երևան 2001թ., էջ 158-159:
6. Ստեփանյան Վ., Հայաստանը գլոբալ աշխարհում, Կանթեղ 5, Երևան 2001թ., էջ 170:
7. Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Изд-во Российско-Армянского университета, 2011, стр.184.
8. Харви Дэвид. Краткая история неолиберализма. М.: Поколение, 2007. стр.4.
9. Малахов В.С. Государство в условиях глобализации. М.: КДУ, 2007. стр.15-19.